հութեան մերոյ, այլ Տէր և արարիչն մեր ոչ է հան 'ի բնութենէ մերմէ զօրութիւն բանական հոգւոյ մերոյ, որ ինքն յատկապէս շնորհեաց մեզ, ուրեմն ունիմք ժամանակ և ուխտ 'ի բերանոյ սրբութենէ նորայ ոչ հանելոյ զմեզ արտաքս և որպէս ամենագէտ արարիչն մեր զեռ ևս պահէ զօրութիւն բանական հոգւոյ մերոյ 'ի բնութիւնս մեր և խոստանայ ընդունիլ մեզ, և նա ինքն ծածկագէտ գոլով բարիօք գիտէր որ կարի արթնանալոց եմք մեք 'ի քնոյ յեղձուցելոյ ծուլութենէ, և յիշելոց եմք զօրութեամբ հոգւոյ մերոյ, զի տուն եմք բանական հոգւոյ 'ի փրկմանէ Տեառն արարչէն մերոյ, թէպէտ մեք հող եմք այլ գտանի մէջ հողոյս պատուականագոյն զօրութիւն բանական հոգւոյ մերոյ, որ առաւել արժէ քան զամենայն ակունս 'ի սիրտ բնական հողոյ երկրի, և դառնալոց եմք 'ի միտս որ 'ի ձեռանէ արարչին մերոյ ստեղծեցաք և 'ի նմանէ ընկալաք զօրութիւն հոգւոյ՝ իշխել 'ի վերայ ամենայն կենդանեաց 'ի յերեսս երկրի, և նա մեզ արար ազատ ըստ Օրինօք, զի եթէ կամեցաք մեք արբցուք բաժակ 'ի գործոց ձեռաց մերոց, և ձեռք մեր մխեցին ընդ անօրէնութիւն և կամք մեր ընդունեցին ճաշակել մահ թշուառութեամբ որում նեղիմք այժմոյս, այլ բարեպէս ծանեաք առաջագոյն զի նեղելոց էաք, այլ որպէս մեղաք թէ սղալանօք, թէ ագահութեամբ, թէ խաբէ-